| <b>Ընդամենը պետական արժեքորեն</b>  | -                                 | -                               |                       |                         |
| <b>ՀՀ ոչ պետական արժեքորեն</b>   |                                   |                                 |                       |                         |
| <b>Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ<br/>ունեցող թողարկողի, այդ թվում՝<br/><br/>երկարաժամկետ պարտքային գործիքներ<br/>կարճաժամկետ պարտքային գործիքներ ավանդային<br/>հավաստագործ<br/>այլ</b>                   | <u>գուցակվ<br/>ած</u>             | <u>թուցակ-<br/>ված</u>          | <u>գուցակվ<br/>ած</u> | <u>չցուցակ-<br/>ված</u> |
| <b>Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի<br/>կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի,<br/>այդ թվում՝<br/><br/>երկարաժամկետ պարտքային գործիքներ<br/>կարճաժամկետ պարտքային գործիքներ</b> |                                   | -                               |                       | -                       |

|   |   |   |
|---|---|---|
| ավանդային հավաստագրեր<br>այլ  |   |   |
| ԲԲԲ+/Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝ երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ ավանդային հավաստագրեր<br>այլ |   | - |
| Հաշվեգրված տոկոսներ   | - | - |
| Ընդամենը  | - | - |

Այլ երկրների ոչ պետական արժեթղթեր

| Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի, այդ թվում՝<br>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ ավանդային հավաստագրեր<br>այլ   | <u>Onigawākyō</u><br><u>σ</u> | <u>ρεցուցակ-</u><br><u>լած</u> | <u>ցուցակ</u><br><u>ած</u> | <u>ρεցուցակ-</u><br><u>լած</u> |
|--|-------------------------------|--------------------------------|----------------------------|--------------------------------|
| ԲԲԲ+/Բա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի, այդ թվում՝<br>երկարաժամկետ պարտքային գործիքներ կարճաժամկետ պարտքային գործիքներ ավանդային հավաստագրեր<br>այլ |                               | -                              |                            | -                              |
| Հաշվեգրված տոկոսներ  | -                             | -                              |                            |                                |
| Ընդամենը   | -                             | -                              |                            |                                |
| Մինչև մարման ժամկետը պահպող ներդրումների արժեզրկում (հնարավոր կորուստների պահուստ)   | ( - )                         | ( - )                          |                            |                                |

|   |   |   |
|---|---|---|
| Չուտ ներդրումներ մինչև մարման ժամկետը պահպող ֆինանսական ակտիվներում | - | - |
|---|---|---|

20. «Հիմնական միջոցներ և ոչ հյութական ակտիվներ»

Հիմնական միջոցներ

| Հոդվածի անվանումը  | Ծենքեր           | Համակ. և<br>կապի<br>միջոցներ | Փոխադրա<br>մաջոցներ | Այլ հիմնական<br>միջոցներ | Հիմն. միջոցների<br>գծով կապիտալ<br>ներդրումներ | Վարձակ. հիմն.<br>միջոցների գծով<br>կապիտալ ներդ. | Ընդամենը         |
|--|------------------|------------------------------|---------------------|--------------------------|--|--|------------------|
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի սկզբում<br><b>01.01.2015թ.</b>   | <b>3,600,529</b> | <b>474,079</b>               | <b>106,229</b>      | <b>615,315</b>           | -  | <b>117,588</b>                                   | <b>4,913,740</b> |
| Ավելացում  | <b>1,613</b>     | <b>57,778</b>                | <b>1,118</b>        | <b>10,102</b>            | -  | -  | <b>70,611</b>    |
| Դուրս գրում  |                  | <b>(795)</b>                 | -                   | -                        | -  | -  | <b>(795)</b>     |
| Վերագնահատում*   | -                | -                            | -                   | -                        | -  | -  | -                |
| Արժեգրկում   |                  |                              |                     |                          |  |  |                  |
| Վերագնահատումից մաշվածության<br>ճշգրտում                           | -                | -                            | -                   | -                        | -  | -  | -                |
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի վերջում<br><b>31.12.2015թ.</b>   | <b>3,602,142</b> | <b>531,062</b>               | <b>107,347</b>      | <b>625,417</b>           | -  | <b>117,588</b>                                   | <b>4,983,556</b> |
| Ավելացում  | -                | <b>16,165</b>                | -                   | <b>506</b>               | <b>46,032</b>                                  | -  | <b>62,703</b>    |
| Դուրս գրում  |                  | <b>(8,316)</b>               | -                   | -                        | -  | -  | <b>(8,316)</b>   |
| Վերագնահատում*   | -                |                              |                     |                          |  |  | -                |
| Արժեգրկում   |                  |                              |                     |                          |  |  |                  |
| Վերագնահատումից մաշվածության<br>ճշգրտում                           | -                |                              |                     |                          |  |  | -                |
| Մնացորդը հաշվետու<br>ժամանակաշրջանի վերջում<br><b>31.03.2016թ.</b> | <b>3,602,142</b> | <b>538,911</b>               | <b>107,347</b>      | <b>625,923</b>           | <b>46,032</b>                                  | <b>117,588</b>                                   | <b>5,037,943</b> |

Կուտակված մաշվածություն

|  |                |                |               |                |   |               |                |
|--|----------------|----------------|---------------|----------------|---|---------------|----------------|
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի սկզբում<br><b>01.01.2015թ.</b> | <b>2,247</b>   | <b>241,134</b> | <b>68,518</b> | <b>372,491</b> | - | <b>79,012</b> | <b>763,402</b> |
| Ավելացում  | <b>128,831</b> | <b>74,237</b>  | <b>10,113</b> | <b>34,189</b>  |   | <b>12,692</b> | <b>260,062</b> |
| Դուրս գրում  | -              | <b>(795)</b>   | -             | -              | - | -             | <b>(795)</b>   |
| Վերագնահատումից մաշվածության<br>ճշգրտում                         | -              | -              | -             | -              | - | -             | -              |
| Արժեգրկում   | -              | -              | -             | -              | - | -             | -              |

|   |                |                |               |                |   |               |                  |
|---|----------------|----------------|---------------|----------------|---|---------------|------------------|
| Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի վերջում<br>31.12.2015թ.   | <b>131,078</b> | <b>314,576</b> | <b>78,631</b> | <b>406,680</b> | - | <b>91,704</b> | <b>1,022,669</b> |
| Ավելացում   | <b>13,572</b>  | 19,207         | <b>2,211</b>  | 7,782          |   | 3,172         | <b>45,944</b>    |
| Դուրս գրում   | -              | (8,316)        | -             | -              |   | -             | (8,316)          |
| Վերագնահատումից մաշվածության ճշգրտում                   | -              | -              | -             | -              | - | -             | -                |
| Արժեքը կում   | -              | -              | -             | -              | - | -             | -                |
| Մնացորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում<br>31.03.2016թ. | <b>144,650</b> | <b>325,467</b> | <b>80,842</b> | <b>414,462</b> | - | <b>94,876</b> | <b>1,060,297</b> |

### Զուտ հաշվեկշռային արժեք

|  |                  |                |               |                |               |               |                  |
|--|------------------|----------------|---------------|----------------|---------------|---------------|------------------|
| Նախորդ ժամանակաշրջանի վերջում 31.12.2015թ.   | <b>3,471,064</b> | <b>216,486</b> | <b>28,716</b> | <b>218,737</b> | -             | <b>25,884</b> | <b>3,960,887</b> |
| Հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31.03.2016թ. | <b>3,457,492</b> | <b>213,444</b> | <b>26,505</b> | <b>211,461</b> | <b>46,032</b> | <b>22,712</b> | <b>3,977,646</b> |

### Ոչ նյութական ակտիվներ

|   | Համակարգչային ծրագրեր | Լիցենզիաներ և վատահագրեր | Հեղինակային իրավունքներ | Այլ ոչ նյութական ակտիվներ | Ոչ նյութական ակտիվ. գծով կապ. ներդ. | Այլ            |
|---|-----------------------|--------------------------|-------------------------|---------------------------|-------------------------------------|----------------|
| <b>Ակտրնական արժեք</b>                                |                       |                          |                         |                           |                                     |                |
| Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի սկզբում<br>01.01.2015թ. | <b>35,638</b>         | <b>19,615</b>            | -                       | <b>53,077</b>             | -                                   | <b>108,330</b> |
| Ավելացում   | <b>3,327</b>          | <b>23,342</b>            | -                       | -                         |                                     | <b>26,669</b>  |
| Օտարում   | -                     | -                        | -                       | -                         | -                                   | -              |
| Վերագնահատում*  | -                     | -                        | -                       | -                         | -                                   | -              |
| Արժեքը կում   | -                     | -                        | -                       | -                         | -                                   | -              |
| Վերագնահատումից մաշվածության ճշգրտում                 | -                     | -                        | -                       | -                         | -                                   | -              |
| Մնացորդ նախորդ ժամանակաշրջանի վերջում<br>31.12.2015թ. | <b>38,965</b>         | <b>42,957</b>            | -                       | <b>53,077</b>             | -                                   | <b>134,999</b> |
| Ավելացում   | -                     | 94                       | -                       | 1,621                     |                                     | 1,715          |

|   |        |        |   |        |   |   |         |
|---|--------|--------|---|--------|---|---|---------|
| Օտարում   | -      | -      | - | -      | - | - | -       |
| Վերագնահատում*  | -      | -      | - | -      | - | - | -       |
| Արժեզրկում  | -      | -      | - | -      | - | - | -       |
| Վերագնահատումից մաշվածության<br>ճշգրտում                    | -      | -      | - | -      | - | - | -       |
| Մնացորդը հաշվետու<br>ժամանակաշրջանի վերջում<br>31.03.2016թ. | 38,965 | 43,051 | - | 54,698 | - | - | 136,714 |

#### Կուտակված մաշվածություն

|  |        |        |   |        |   |   |        |
|--|--------|--------|---|--------|---|---|--------|
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի սկզբում<br><b>01.01.2015թ.</b>   | 30,348 | 8,295  | - | 48,648 | - | - | 87,291 |
| Ավելացում  | 1,187  | 3,825  | - | 2,806  | - | - | 7,818  |
| Օտարում  | -      | -      | - | -      | - | - | -      |
| Արժեզրկում   | -      | -      | - | -      | - | - | -      |
| Վերագնահատում  | -      | -      | - | -      | - | - | -      |
| Մնացորդը նախորդ<br>ժամանակաշրջանի վերջում<br><b>31.12.2015թ.</b>   | 31,535 | 12,120 | - | 51,454 | - | - | 95,109 |
| Ավելացում  | 352    | 1,296  | - | 477    | - | - | 2,125  |
| Օտարում  | -      | -      | - | -      | - | - | -      |
| Վերագնահատումից մաշվածության<br>ճշգրտում                           | -      | -      | - | -      | - | - | -      |
| Արժեզրկում   | -      | -      | - | -      | - | - | -      |
| Մնացորդը հաշվետու<br>ժամանակաշրջանի վերջում<br><b>31.03.2016թ.</b> | 31,887 | 13,416 | - | 51,931 | - | - | 97,234 |

#### Զուտ հաշվեկշռային արժեք

|  |       |        |   |       |   |   |        |
|--|-------|--------|---|-------|---|---|--------|
| Նախորդ տարվա վերջում<br><b>31.12.2015թ.</b>            | 7,430 | 30,837 | - | 1,623 | - | - | 39,890 |
| Հաշվետու ժամանակաշրջանի<br>վերջում <b>31.03.2016թ.</b> | 7,078 | 29,635 | - | 2,767 | - | - | 39,480 |

## 21. «Այլ ակտիվներ»

| <u>Քանիային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ</u>             | <u>Հաշվետու ժամանակաշրջան</u> | <u>Նախորդ ժամանակաշրջան</u> |
|---|-------------------------------|-----------------------------|
| Ստացվելիք շահաբաժններ   | -                             | -                           |
| Հավատարմագրային կառավարման գործառնությունների գծով ստացվելիք գումարներ  | -                             | -                           |
| Այլ գործառնություններից ստացվելիք գումարներ                             | 87,415                        | 78,462                      |
| Ընդամենը  | 87,415                        | 78,462                      |
| Քանիային գործառնությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (Ժանր. 7) | (6,398)                       | (5,907)                     |
| «Քանիային գործառնությունների գծով ստացվելիք գուտ գումարներ              | 81,017                        | 72,555                      |

| <u>Դերիտորական պարտքեր և կանխավճարներ</u>                          | <u>Հաշվետու ժամանակաշրջան</u> | <u>Նախորդ ժամանակաշրջան</u> |
|--|-------------------------------|-----------------------------|
| Դերիտորական պարտքեր մատակարարների գծով                             | 647                           | 679                         |
| Կանխավճարներ աշխատակիցներին  | -                             | 30                          |
| Կանխավճարներ մատակարարներին  | 35,934                        | 4,003                       |
| Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոց. ապահովագրության վճարների գծով | 1,526                         | -                           |
| Այլ դերիտորական պարտքեր և կանխավճարներ                             | -                             | -                           |
| Ընդամենը   | 38,107                        | 4,712                       |
| Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (Ժանր. 7)          | ( - )                         | ( - )                       |
| Ընդամենը   | 38,107                        | 4,712                       |

Այլ ակտիվներ

|  |                  |                  |
|--|------------------|------------------|
| <b>Պահեստ</b>  | <b>17,352</b>    | <b>13,567</b>    |
| Բռնագանձված գրավ և վաճառքի համար պահվող<br>ակտիվներ* | 4,637,660        | 4,640,976        |
| Ապագա ժամանակաշրջանի ծախսեր                          | <b>8,752</b>     | <b>7,710</b>     |
| Այլ ակտիվներ   | <b>2,827</b>     | <b>2,938</b>     |
| <b>Ընդամենը</b>                                      | <b>4,666,591</b> | <b>4,665,191</b> |
| <b>Ընդամենը այլ ակտիվներ</b>                         | <b>4,785,715</b> | <b>4,742,458</b> |

*4,637,660 հազ. դրամը հանդիսանում է չմարված պարտավորության դիմաց բանկին անցած գրավի գումար*

23.«Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

| <u>Ընթացիկ հաշիվներ</u>  | <u>Հաշվետու<br/>ժամանակաշրջան</u> | <u>Նախորդ<br/>ժամանակաշրջան</u> |
|--|-----------------------------------|---------------------------------|
| ՀՀ բանկերի   | 93,106                            | 1,444                           |
| BBB-(Baa3) և բարձր վարկանիշ ունեցող բանկերի  |                                   |                                 |
| BBB-(Baa3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկերի                              |                                   |                                 |
| Հաշվեգրված տոկոսներ  | 93,106                            | 1,444                           |
| <u>Ընդամենը</u>  |                                   |                                 |
| <u>Սիցքանիկային վարկեր և ավանդներ, այլ</u>   |                                   |                                 |
| ՀՀ կենտրոնական բանկ<br>վարկեր *<br>ուսուառ (հետգնման) պայմանագրեր<br>այլ                     | 1,810,138<br>8,627,263            | 3,093,561<br>6,506,395          |
| ՀՀ բանկեր<br>վարկեր և ավանդներ<br>ֆինանսական լիզինգ<br>ուսուառ (հետգնման) պայմանագրեր<br>այլ | 1,200,000<br>1,025,788            | 1,349,999<br>1,852,369          |
| BBB-(Baa3) և բարձր վարկանիշ ունեցող բանկեր   |                                   |                                 |
| վարկեր և ավանդներ  |                                   |                                 |
| ֆինանսական լիզինգ  |                                   |                                 |
| ուսուառ (հետգնման) պայմանագրեր   |                                   |                                 |
| այլ  | -                                 |                                 |
| <b>BBB-(Baa3)-ից ցածր վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող բանկեր</b>                        |                                   |                                 |

|                              |                   |                   |
|------------------------------|-------------------|-------------------|
|                              |                   |                   |
| Վարկեր և ավանդներ            | <b>480,784</b>    |                   |
| Ֆինանսական լիգինգ            |                   |                   |
| ռեպո (հետզննման) պայմանագրեր |                   |                   |
| այլ                          | -                 | -                 |
| <b>Հաշվեգրված տոկոսներ</b>   | <b>16,621</b>     | <b>17,530</b>     |
| <b>Ընդամենը</b>              | <b>13,253,700</b> | <b>12,821,298</b> |

**Ֆինանսական կազմակերպություններ**

|   |                  |                  |
|---|------------------|------------------|
| Ընթացիկ հաշիվներ  | 193,580          | 202,205          |
| Վարկեր և ավանդներ   | 737,520          | 591,650          |
| ռեպո (հետզննման) պայմանագրեր  | -                | -                |
| Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք<br>բերված արժեքների գծով | 1,640,108        | 794,781          |
| այլ   | 22,032           | 109,069          |
| <b>Հաշվեգրված տոկոսներ</b>  | <b>14,773</b>    | <b>11,266</b>    |
| <b>Ընդամենը</b>   | <b>2,608,013</b> | <b>1,708,971</b> |

|  |            |            |
|--|------------|------------|
| Ընդամենը պարտավորություններ բանկերի և<br>այլ ֆինանսական կազմակերպությունների<br>նկատմամբ | 15,861,713 | 14,530,269 |
|--|------------|------------|

**24.«Պարտավորությունների հաճախորդների նկատմամբ»**

**ՀՀ Կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ**

|                             | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|-----------------------------|---------------------------|-------------------------|
| Ընթացիկ հաշիվներ            | -                         | -                       |
| Ժամկետային ավանդներ         | -                         | -                       |
| <b>Վարկեր</b>               | <b>492,013</b>            | <b>492,062</b>          |
| Ուսպ (հետզննան) պայմանագրեր | -                         | -                       |
| <b>Այլ*</b>                 | <b>63</b>                 | <b>86</b>               |
| <b>Հաշվարկված տոկոսներ</b>  | <b>10,819</b>             | <b>1,618</b>            |
| <b>Ընդամենը</b>             | <b>502,895</b>            | <b>493,766</b>          |

**ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ**

|                             |                   |                  |
|-----------------------------|-------------------|------------------|
| Ընթացիկ հաշիվներ            | 9,015,170         | 7,294,260        |
| Ժամկետային ավանդներ         | 1,066,178         | 982,279          |
| Ուսպ (հետզննան) պայմանագրեր |                   |                  |
| <b>Այլ</b>                  | <b>35,233</b>     | <b>21,920</b>    |
| <b>Հաշվարկված տոկոսներ</b>  | <b>21,230</b>     | <b>14,125</b>    |
| <b>Ընդամենը</b>             | <b>10,137,811</b> | <b>8,312,584</b> |

**Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ**

|                             |        |        |
|-----------------------------|--------|--------|
| Ընթացիկ հաշիվներ            | 19,194 | 61,802 |
| Ժամկետային ավանդներ         | -      | -      |
| Ուսպ (հետզննան) պայմանագրեր |        |        |
| <b>Այլ</b>                  |        |        |

|                            |               |               |
|----------------------------|---------------|---------------|
| <b>Հաշվարկված տոկոսներ</b> |               |               |
| <b>Ընդամենը</b>            | <b>19,194</b> | <b>61,802</b> |

**ՀՀ ռեզիլենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ**

|                                     |               |               |
|-------------------------------------|---------------|---------------|
| <b>Ընթացիկ հաշիվներ</b>             | <b>17,745</b> | <b>13,447</b> |
| <b>Ժամկետային ավանդներ</b>          | -             | -             |
| <b>Ուսպո (հետզննան) պայմանագրեր</b> | -             | -             |
| <b>Այլ</b>                          | -             | <b>181</b>    |
| <b>Հաշվարկված տոկոսներ</b>          | -             | -             |
| <b>Ընդամենը</b>                     | <b>17,745</b> | <b>13,628</b> |

**Ոչ ռեզիլենտ անհատ ձեռնարկատերերի նկատմամբ**

|                                     |          |          |
|-------------------------------------|----------|----------|
| <b>Ընթացիկ հաշիվներ</b>             | <b>1</b> | <b>1</b> |
| <b>Ժամկետային ավանդներ</b>          | -        | -        |
| <b>Ուսպո (հետզննան) պայմանագրեր</b> | -        | -        |
| <b>Այլ</b>                          | -        | -        |
| <b>Հաշվարկված տոկոսներ</b>          | -        | -        |
| <b>Ընդամենը</b>                     | <b>1</b> | <b>1</b> |

**ՀՀ ռեզիլենտ ֆիզիկական անձանց նկատմամբ**

|                                     |                   |                   |
|-------------------------------------|-------------------|-------------------|
| <b>Ընթացիկ հաշիվներ</b>             | <b>3,513,282</b>  | <b>3,256,639</b>  |
| <b>Ժամկետային ավանդներ</b>          | <b>17,879,962</b> | <b>17,834,317</b> |
| <b>Ուսպո (հետզննան) պայմանագրեր</b> |                   |                   |
| <b>Այլ</b>                          | <b>23,496</b>     | <b>44,286</b>     |
| <b>Հաշվարկված տոկոսներ</b>          | <b>194,800</b>    | <b>179,940</b>    |

|          |            |            |
|----------|------------|------------|
| Ընդամենը | 21,611,540 | 21,315,182 |
|----------|------------|------------|

Ոչ ռեզիլենտ ֆիզիկական անձանց նկատմամբ

|                              |           |           |
|------------------------------|-----------|-----------|
| Ընթացիկ հաշիվներ             | 218,081   | 327,373   |
| Ժամկետային ավանդներ          | 3,347,523 | 3,060,971 |
| Ուսու (հետզննան) պայմանագրեր |           |           |
| Այլ                          |           |           |
| Հաշվարկված տոկոսներ          | 16,669    | 21,252    |
| Ընդամենը                     | 3,582,273 | 3,409,596 |

|  |            |            |
|--|------------|------------|
| Ընդամենը պարտավորություններ<br>հաճախորդների նկատմամբ | 35,871,459 | 33,606,559 |
|--|------------|------------|

Դաճախորդների բոլոր ավանդերն ունեն հաստատում տոկոսադրույթներ:

25. Թողարկված պարտքային արժեթղթեր

| Դագար ՀՀ դրամ                             | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|---|---------------------------|-------------------------|
| Տոկոսային արժեթղթեր                       | 5,464,635                 | 5,286,820               |
| Հաշվեգրված տոկոսներ                       | 18,939                    | 19,916                  |
| Ընդամենը թողարկված պարտքային<br>արժեթղթեր | 5,483,574                 | 5,306,736               |

26. «Առևտրային նպատակներով պահվող պարտավորություններ»

|  | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|--|---------------------------|-------------------------|
| Առևտրային նպատակներով պահվող ածանցյալ<br>գործիքներ՝<br><br>ֆյուչերս<br>ֆորվարդ<br>օպցիոն<br>սվուլ<br>այլ | -                         | -                       |
| Հեջափորման ածանցյալ գործիքներ  | -                         | -                       |
| Այլ  |                           |                         |
| Ընդամենը   | -                         | -                       |

27. «Վճարվելիք գումարներ»

| <u>Վճարվելիք գումարներ</u>                       | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|--|---------------------------|-------------------------|
| Ծահարաժիններ                                     | -                         | -                       |
| Հավատարմագրային կառավարման պայմանագրերով<br>գծով | -                         | -                       |
| Ավանդների ապահովագրության գծով                   | <b>12,649</b>             | <b>11,985</b>           |
| Այլ  | -                         | -                       |
| Ընդամենը   | 12,649                    | 11,985                  |

## 29. «Այլ պարտավորություններ»

| «Այլ պարտավորություններ»   | Հաշվետու<br>ժամանակաշրջան | Նախորդ<br>ժամանակաշրջան |
|--|---------------------------|-------------------------|
| Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով | -                         | -                       |
| Հաշվարկային պարտավորություններ ակրեալիտիվների գծով                 | -                         | -                       |
| Այլ հաշվարկներ գծով  | -                         | -                       |

Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով՝

|  |           |         |
|--|-----------|---------|
| շահութահարկի գծով  | 58,464    | 771     |
| ԱԱՀ-ի գծով   | 371       | 904     |
| այլ հարկերի ու տուրքերի գծով                               | 6,476     | 80,800  |
| առց. պահովվագրության վճարումների գծով                      | -         | -       |
| Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ աշխատավարձի գծով | 78,043    | 66,602  |
| Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ                | 10,582    | 13,377  |
| Կրեդիտորական պարտքեր կանոնադրական կապիտալի համարման գծով   |           |         |
| Այլ պարտավորություններ*                                    | 1,056,719 | 72,762  |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջում                            | 1,210,655 | 235,216 |

\* Ակտիվներին վերաբերող շնորհներ

| Բազար ՀՀ դրամ                   | 2016   | 2015    |
|---------------------------------|--------|---------|
| Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ | 53,928 | 56,002  |
| Ավելացում                       |        |         |
| Եկամտի ճանաչում                 | (519)  | (2,074) |
| Մնացորդը ժամանակաշրջանի վերջում | 53,409 | 53,928  |

### 30. «Կանոնադրական կապիտալ»

Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը **14.400.000 հազ. ՀՀ դրամ է:**

Դամաձայն Բանկի կանոնադրության, փայտիրական կապիտալը կազմված է թվով 14,400 փայտամասերից՝ յուրաքանչյուրը 1,000,000 դրամ անվանական արժեքով:

| Նշանակալից մասնակցի<br>անունը/անվանումը          | Բանկում ունեցած<br>մասնակցության<br>գումարը | Բանկում ունեցած<br>մասնակցության<br>չափը տոկոսային<br>հարաբերությամբ | Մասնակցի<br>գործունեության<br>տեսակը<br>(իրավաբանական<br>անձանց համար) |
|--|---|--|--|
| ՈՒ ռեզիդենտ<br>Պրոմեթեյ - Սիրի ՍՊԸ               | 7.196.400                                   | 49.975%  | Հյուրանոցային<br>բիզնես  |
| ՀՀ ռեզիդենտ<br>Չակնեֆտեկազստրոյ-<br>Պրոմեթեյ ԲԲԸ | 6.642.000                                   | 46.125 %   | Գազատարերի և<br>նավթամուղերի<br>շինարարություն                         |
| ՈՒ ռեզիդենտ<br>Գևորգյան Վազգեն                   | 561.600                                     | 3.9 %  |  |
| Ընդամենը՝  | 14.400.000                                  | 100 %  |  |

#### 31.03.16թ -ի դրությամբ Բանկի կողմից հետ գնված փայտամասեր չեն եղել:

Փայտերերը իրավունք ունեն ստանալու շահարաժին և մեկ ձայնի իրավունք Բանկի տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բանկի փայտիրական կապիտալի ավելացումը իրականացվում է փայտերերի կողմից ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահարաժին և բաշխել կապիտալը ՀՀ դրամով:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ

օրենսդրության պահանջների՝ ընդհանուր քանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված փայտափրական կապիտալի 5%-ի չափով:

### **Բանկի իրավական և հարկային պարտավորությունները**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Ըստ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Դեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամրողությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկի դեկավարության գնահատմամբ Բանկը կորուստներ չի կրելու, հետևաբար Բանկի կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստներ չեն ձևավորվել:

### **Վարկային ռիսկ պարունակող պարտավորություններ, երաշխիքներ և այլ ֆինանսական պայմանագրեր**

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հնտհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն վարկային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում հաշվեկշռում:

|   | <b>Հաշվետու Ժամանակաշրջան</b> | <b>Նախորդ<br/>Ժամանակաշրջան</b> |
|---|-------------------------------|---------------------------------|
| Զօգտագործված վարկային գծեր                      | 1,635,798                     | 670,413                         |
| Տրամադրված երաշխիքներ                           | 778,284                       | 861,757                         |
| Տրամադրված ակրեդիտիվներ                         | -                             | -                               |
| Ընդամենը՝                                       | 2,414,082                     | 1,532,170                       |
| <b>Նշված հողվածների գծով պահուստ (ծանոթ. 7)</b> | -                             | -                               |
|   | <b>2,414,082</b>              | <b>1,532,170</b>                |

#### **Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – բանկը որպես վարձակալող**

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր մասնաճյուղերի, բանկոմատների համար տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

|   |                   |
|---|-------------------|
| Բազար ՀՀ դրամ   | <b>31.03.2016</b> |
| Մինչև 1 տարի  | <b>103,995</b>    |
| 1-5 տարի  | <b>157,511</b>    |
| 5 տարուց ավելի  | <b>27,300</b>     |
| <b>Ընդհանուր պարտավորություններ<br/>գործառնական վարձակալության գծով</b> | <b>288,806</b>    |

#### **Ապահովագրություն**

Սկսած 2005թ. Բանկը հանդիսանում է ավանդների պարտադիր ապահովագրական համակարգի անդամ: Նշված համակարգը գործում է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների և կանոնակարգվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքով: Ապահովագրությունը մարում է Բանկի պարտավորությունները ֆիզիկական անձանց ավանդների գծով 4,000 հազար դրամ ընդհանուր գումարով (մինչև 2,000 հազար դրամ՝ արտարժույթով ավանդների դեպքում), Բանկի սննկացման և բանկային արտոնագրի հետ կամչման դեպքում:

## **Ծանոթագրություն 32. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»**

### **Վարկային ռիսկի վերլուծություն**

«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ, իր կողմից վարկային միջոցների տրամադրումը իրականացնում է համաձայն բանկում գործող ներքին կանոնակարգերի և ընթացակարգերին համաձայն:

Ներկայումս բանկի կողմից տեղաբաշխված վարկային միջոցների վերադարձելիությունը ապահովված է տարբեր իրացվելի և բարձր իրացվելի գրավի առարկաներով: Բանկում գրավադրված գրավի առարկաների գրավադրման գործընթացը, ինչպես նաև գրավի առարկայի ընտրությունը, գրավ/վարկ հարաբերակցությունը կարգավորվում է բանկի «Գրավի քաղաքականության» կանոնակարգով: Նշված կանոնակարգում արտացոլված է բանկում գրավադրվող գրավի առարկաների տեսակները, բացի այդ ներկայացված է գրավի առարկայի գրավադրման /իրացվելիության/ իրական արժեքի հաշվարկման սկզբունքները:

Ստորև ներկայացվում է գրավի առրկաների տեսակները՝

- Անշարժ և շարժական գույք
- Ապրանքանյութական պաշարներ /շրջանառու միջոցներ/
- Պետական և ոչ պետական /անվանական/ արժեքներ
- Ուկու ստանդարտացված ձուլակտորներ
- Ուկյա իրեր /թանկարժեք քարեր և մետաղներ, ոսկու ջարդուններ/
- Դրամական միջոցներ
- Երաշխիքներ
- Դրամական հոսքեր

Հարկավոր է նշել, որ վարկային ռիսկը զապելու նպատակով բանկում կանոնակարգված է գրավ/վարկ հարաբերկացության սահմանաշափը, որը տատանվում է տարբեր գրավի առարկաների գրավադրման ժամանակ: Սակայն այդ սահմանաշափերի ընտրությունը բավականին արդիական է, քանի որ այն բավականին մեծ նշանակություն ունի վարկային ռիսկի զապման ժամանակ:

Ներկայումս նշեք, որ բանկում գրավադրվող գրավի առարկաները, որոնք իրենից ներկայացնում են անշարժ, կամ շարժական գույք /բացառությամբ ավտոսրահների կողմից վաճառվող ավտոմեքենաները, որոնք հանդես են զալիս որպես գրավի առարկաներ ավտոմեքենայի առուվաճառքի ժամանակ/, պարտադիր զնահատվում և վերագնահատվում են անկախ զնահոտող լիցենզավորված կազմակերպության կողմից, որի հետ բանկը տվյալ պահին համագործակցում է : Ըստ զնահատող կազմակերպության կողմից տրված զնահատման վերլուծության, որտեղ արտացոլված է ինչպես տվյալ գույքի

շուկայական արժեքը, այնպես և գրավադրման արժեքը, բանկը կարողանում է ճիշտ որոշում կայացնել տվյալ գույքի իրական իրացվելի արժեքի վերաբերյալ, որը հաճախ իրենից ներկայացնում է նույն գնահատման վերլուծության մեջ արտացոլված գրավադրման արժեքը: Բոլոր վերը նշված գրավի առարկաները նույնապես ունեն իրենց գնահատման սկզբունքը, որը ամրագրված է «Գրավի քաղաքականության» կանոնակարգում: Նշենք նաև որ ներկա դրությամբ բանկի վարկային պորտֆելը ապահովված է բոլոր բանկի կողմից ընդունված գրավի առարկաներով, իսկ սահմանաչափերը համապատասխանում են ընդունված գրավ/վարկ հարաբերկացության սահմանաչափերին:

Բանկը, մասնավորապես «վարկավորման և միջոցների ներգրավման վարչությունը», շափականց կարևոր է գտնում վերահսկել բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների նպատակային օգտագործումը, ինպես նաև իր վարկառուների պարբերաբար մոնիթորինգների անցկացումը, բանի որ այս գործընթացները սերտ կապված են վարկի վերադարձելիության հետ և հանդիսանում են վարկային ռիսկի զսպման մեխանիզմներից մեկը: Հարկավոր է նշել, որ իրականացվող մոնիթորինգների ժամանակ ուսումնասիրվում և ստուգվում է բանկում գրավադրված, սակայն գրավատուի մոտ գտնվող գրավի առարկայի վիճակը, ինչպես նաև տրամադրված վարկերի օգտագործման նպատակը, վարկառուի ընթացիկ ֆինանսական վիճակը: Ստուգվում է նաև վարկառուի ընթացիկ դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների ի հայտ գալը, գումարների մեծությունները և առաջացման աղբյուրները և մարման ժամանակահատվածը, վարկառուի ակտիվների և պարտավորությունների սահմանային հարաբերակցությունը, դրամական միջոցների առկայությունը դրամարկղում և հաշվարկային հաշիվների վրա, իր հիմնական մատակարանների և սպառողների տվյալները, առկա փախառությունների մեծությունները, առկա վակայն գումարների մնացորդները, ամսեկան մարումների մեծությունները, վերջնական մարման ժամանակահատվածները և այլն:

Բացի այդ մինչ վարկային միջոցների տրամադրումը իրականացվում է ցանկացած պոտենցիալ վարկառուի վարկունակության գնահատումը, որի վերլուծությունը նույն պես կանոնակարգված է բանկում առանձին ընթացակարգերով, մասնավորապես՝ «Ֆիզիկական և իրավաբանական անձնանց վարկունակության գնահատման» կանոնակարգերով: Նշենք, որ այդ կանոնակարգերում բանկի կողմից մշակվել են տնտեսական բանաձևեր, որոնք օգնում են ռեալ բացահայտել տվյալ վարկառուի վարկունակությունը, որոնցից կարելի է օրինակ նշել, վարկառուի ամսեկան մարումների մեծությունը իր ընդհանուր ամեկան եկամուտի /հասույթի/ մեծության մեջ, կամ օրինակ իր ընդհանուր ակտիվների հարաբերակացությունը իր ընդհանուր պարտավորությունների մեջ ներառյալ նոր տրամադրվող վարկային միջոցները, ինչպես նաև հաշվարկվում է իր շրջանառու միջոցների շրջանառելիությունը ամսեկան կտրվածքով, որը նույնապես հնարավարություն է տալիս պատկերացում ստեղծել ապագա վարկառուի առևտրային գործունեության մասին:

Մեծ և առանձնակի ուշադրություն է տրվում այն շարժական գույք գրավի առարկաների որոնք գրավադրված են բանկում, մասնավորապես հնարագծերի, մեքենասարքավորումների, կամ շրջանառու միջոցների մասով: Այս գրավի առարկաները մշտապես գտնվում են բանկի կողմից վերահսկության տակ և դրանց վիճակի ստուգումը իրականացվում է բանկի կողմից ավելի կարճ ժամանակահատվածում, համաձայն բանկում սահմանված «Գրավի քաղաքականության» կանոնակարգի:

Ներքին որոշ ռիսկերը զապելու նպատակով բանկում առկա վարկային բոլոր գործերը համարակալվում են և վարվում է առանձին փաստաթղթերի գույքգրման ցուցակ, յուրաքանչյուր վարկային գործի համար առանձին, ինչը հնարավարություն է տալիս բացառել այս, կամ այն փաստաթղթի կորուստը տվյալ վարկային գործից:

Բանկի «Վարկավորման և միջոցների ներգրավման վարչության» կազմից վարվում է առանձին մի քանի մատյաններ, մասնավորապես վարկային հայտերի ընդունման, մարված վարկային գործերի համարակալման և այլն, որոնք հեշտացնում են վարկային գործընթացը:

Հարկավոր է նշել, որ բանկը նաև մեծ կարևորություն է տալիս գրավի առարկայի ապահովագրմանը, մասնավորապես կանոնակարգելով այն իր «Գրավի քաղաքականության» կանոնակրագով:

Բանկը «Վարկային քաղաքականության» իրականացման շրջանակներում վարկային ռիսկերի զապման նպատակով Վարկառու-Գրավատուից (եթե նույն անձն է) կամ Գրավատուից (եթե տարբեր անձինք են) պահանջում է վարկային միջոցների լրացուցիչ ապահովության (վերադարձելիության) միջոցների (գրավի առարկաների)՝ մասնավորապես ավտոմեքենաների և բնակելի անշարժ գույքի գրավի (ըստ Վարկային միջոցների տրամադրման և մարման կանոնակարգի) ապահովագրում, սույն քաղաքականության 4.2 և 4.3 ենթակետերով ամրագրված կարգով:

Ապահովագրումը իրականացվում է առնվազն մեկ տարի ժամկետով, վարկային պայմանագրով ամրագրված վարկի գումարի չափով (կամ հաճախորդի ցանկությամբ գրավի առարկաների ամբողջ արժեքի չափով) ապահովագրական պոլիսի հետագա երկարածզման պարտադիր պայմանով առնվազն տարին մեկ անգամ, վարկային պայմանագրով ամրագրված վարկի մարման ամբողջ ժամանակահատվածում:

Առաջնորդվելով «Բանկերի և Բանկային գործունեության օրենքի» 34 հոդվածի 3 կետով, բանկը գրավի առարկաների գնահատման, վերագնահատման և ապահովագրության նպատակով համագործակցում է ՀՀ օրենսդրության համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անշարժ գույքի գործակալության կամ անձանց և ապահովագրական ընկերությունների հետ:

ՀՀ օրենսդրության համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անշարժ գույքի գործակալության կամ անձանց և ապահովագրական ընկերությունների հետ համագործակցության ընտրությունը կատարվում է առաջնորդվելով մի շարք օրյեկտիվ չափանիշներից՝

ա) կազմակերպությունները պետք է ունենան տվյալ ոլորտում առնվազն երեք տարվա գործունեության փորձ,

բ) ռեյլինգավորված լինեն ռեյտինգ իրականացնող անկախ ընկերության կողմից,

գ) ընդգրկված լինեն առաջին հինգ ռեյլինգավորված կազմակերպությունների շարքում հետևյալ չափանիշներով՝

- ընդհանուր ակտիվներով,
- սեփական կապիտալով,
- ընդհանուր պատմական կազմակերպությունների շարքում հետևյալ չափանիշներով,
- գուտ շահույթով (կամ վնասով),
- ապահովագրական փոխհատուցումով,

- Վերաապահովագրողի ռեկինգով (հեղինակությամբ):

Բացի նշված պարտադիր հիմնական օբյեկտիվ պահանջներից, բանկը ուսումնասիրության և վերլուծության կարող է ենթարկել նաև կազմակերպությունների ընդհանուր ակտիվները և պարտավորությունները, սեփական կապիտալի մեծությունը, տարեկան հասույթը, ինչպես նաև կազմակերպությունների կողմից մատուցվող գնահատման և ապահովագրման պրոդուկտները, դրանց գծով սակագների մեծությունները և այլն: Գնահատող կազմակերպությունների կողմից իրականացվող գնահատման գործընթացը պետք է ներառի գնահատման մեթոդների մի քանի մոտեցումներ, կատարվի կոնկրետ հաշվարկների միջոցով, տրվող հաշվետվությունների մեջ ընդգրկված լինի ինչպես գնահատվող գրավի առարկայի շուկայական արժեքի հաշվարկը, այնպես և գրավադրման (իրացման անհրաժեշտության դեպքում իրացվելի) արժեքները:

Բանկը առաջնորդվելով Բանկի «Վարկային քաղաքականությունով», Բանկի վարկային ռիսկի ներքին կառավարման կանոնակարգով վարկային ռիսկերի գաղման նպատակով կատարում է Բանկում գրավադրված և գրավատուի տիրապետության տակ գտնվող գրավի առարկայի վերահսկում՝ սահմանելով հետևյալ պարբերականությունը՝

Անշարժ գույքը (բնակելի, հասարակական, արտադրական, գյուղատնտեսական նշանակության շենքերը, շինուարուները, հողատարածքները) յուրաքանչյուր վերագնահատման ժամանակ (առնվազն տարին մեկ անգամ) ենթարկվում է վերահսկման ՀՀ օրենսդրության համապատասխան գործունեության լիցենզիա ունեցող անշարժ գույքի գործակալության կամ անձանց և ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրված գնահատման հաշվետվության մեջ: Վերահսկման ընթացքում ուսումնասիրության է ենթարկվում շենքերի, շինուարուների տեխնիկական վիճակը, բնակարանների և առանձնատների գծով կատարված շինարարական և վերանորոգման աշխատանքների աստիճանը (հիփոթեքային վարկավորման դեպքում):

Շարժական գույքը (հոսքագծերը, տեխնոլոգիական սարքավորումները, հաստոցները, մեքենա-սարքավորումները) ենթակա է վերահսկման Բանկի վարկային ռիսկի ներքին կառավարման կանոնակարգով ամրագրված պարտադիր մոնիթորինգ այցերի ժամանակացույցով (առնվազն երեք ամիսը մեկ անգամ): Վերահսկման ընթացքում ուսումնասիրության է ենթարկվում հոսքագծերի, տեխնոլոգիական սարքավորումների, հաստոցների, մեքենա-սարքավորումների տեխնիկական վիճակը, դրանց առկայությունը: Վերահսկման արդյունքների հիման վրա կազմվում է համապատասխան ակտ, որը վավերացվում է Բանկի և Վարկառու-Գրավատուի (եթե նույն անձն է) կամ Գրավատուի (եթե տարբեր անձինք են) կողմից:

Ոչ պետական բաց բաժնետիրական /փակ բաժնետիրական/ ընկերության կողմից բողարկված արժեթղթերը ենթակա չեն վերահսկման այն դեպքում, եթե արժեթղթերը գտնվում են Բանկի տիրապետության ներքո, իսկ եթե գտնվում են Վարկառու-Գրավատուի (եթե նույն անձն է) կամ Գրավատուի (եթե տարբեր անձինք են) տիրապետության ներքո, վերահսկումը իրակացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական՝ Դեպոզիտարիան՝ տրամադրելով Բանկին տեղեկանք արգելադրման վերաբերյալ և քաղվածքը:

Պետական արժեքորդերի (կարճաժամկետ, միջին ժամկետայնության, երկարաժամկետ), այդ թվում նաև դատական ակտերի հիման վրա ստացված մուրհակների վերահսկումը իրականացվում է ՀՀ ԿԲ-ի միջոցով (պետական արժեքորդերը (կարճաժամկետ, միջին ժամկետայնության, երկարաժամկետ), այդ թվում նաև դատական ակտերի հիման վրա ստացված մուրհակները մուտքագրվում են Բանկի՝ գրավադրված արժեքորդերի դեպո հաշվին) և ՀՀ ԿԲ-ի կողմից Բանկին տրամադրվում է քաղվածք՝ գրավադրված արժեքորդերի վերաբերյալ:

Ծրջանառու միջոցների (հումք, պաշարներ, նյութեր, պատրաստի արտադրանք, ապրանքներ) գրավադրման դեպքում վերահսկումը իրակացվում է հետևյալ կերպ՝ եթե շրջանառու միջոցները (հումք, պաշարներ, նյութեր, պատրաստի արտադրանք, ապրանքներ) գտնվում են Բանկի տիրապետության տակ, ապա վերահսկման անհրաժեշտություն չի առաջանում: Եթե շրջանառու միջոցները (հումք, պաշարներ, նյութեր, պատրաստի արտադրանք, ապրանքներ) գտնվում են Վարկառու-Գրավատուի (եթե նույն անձն է) կամ Գ-րավատուի (եթե տարբեր անձինք են) տիրապետության տակ, ապա վերահսկումը իրականացվում է Բանկի վարկային ռիսկի ներքին կառավարման կանոնակարգով ամրագրված պարտադիր մոնիթորինգ այցերի ժամանակացույցով (առնվազն երեք ամիսը մեկ անգամ): Վերահսկման ընթացքում ուսումնասիրության է ենթարկվում շրջանառու միջոցների (հումքի, պաշարների, նյութերի, պատրաստի արտադրանքի, ապրանքների) առկայությունը, դրանց տեխնիկական վիճակը: Վերահսկման արդյունքների հիման վրա կազմվում է համապատասխան ակտ, որը վավերացվում է Բանկի և Վարկառու-Գրավատուի (եթե նույն անձն է) կամ Գ-րավատուի (եթե տարբեր անձինք են) կողմից:

Ավտոմեքենաների (մարդատար և բեռնատար) գրավադրման դեպքում վերահսկումը իրականացվում է վեց ամիսը մեկ անգամ՝ Վարկային պայմանագրով սահմանված մարումների իրականացման ժամանակացույցի համաձայն Վարկառուի Բանկ ներկայանալու ժամանակ: Վերահսկման ընթացքում ուսումնասիրության է ենթարկվում ավտոմեքենայի առկայությունը, տեխնիկական վիճակը: Վերահսկման արդյունքների հիման վրա կազմվում է համապատասխան ակտ, որը վավերացվում է Բանկի և Վարկառու-Գրավատուի (եթե նույն անձն է) կամ Գ-րավատուի (եթե տարբեր անձինք են) կողմից:

Գրավադրված՝ ուկյա զարդերի, թանկարժեք քարերի, ուկու ստանդարտացված ձուլակտորների, թանկարժեք այլ մետաղների, նրանց ջարդունների նկատմամբ վերահսկողություն չի իրականացվում:

Հաշվարկային կամ ավանդային հաշվի միջոցների գրավադրման դեպքում վերահսկողության անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ նշված միջոցները սառեցվում են մինչև պարտավորությունների մարումը:

Բանկում վարկային ռիսկի կառավարումը ենթադրում է՝

- վարկային քաղաքականության մշակում,
- վարկավորման գործընթացի կանոնակարգում,
- վարկային պորտֆելի կառավարում,

- Վարկային գործընթացների կառավարում,
- շաշխատող վարկային պորտֆելի կառավարում,
- Վարկային ռիսկի սահմանափակման միջոցառումների մշակում,
- հնարավոր կորուստների ծածկման պահուստների ձևավորում:  
Վարկային ռիսկի կառավարումը իրենից ներկայացնումն է որոշակի գործողությունների հերթականություն, որը կարելի բաժանել հետևյալ փուլերի.
- Վարկային ռիսկի բացահայտում,
- Վարկային ռիսկի քանակական զնահատում,
- ռիսկի ընդունման ռազմավարություն,
- ռիսկի վերահսկում,
- Վարկային ռիսկերի զայման և նվազեցման մեթոդների ընտրություն,
- ռիսկերի մոնիթորինգ,
- ռիսկի մակարդակի վերահսկում:  
Վարկային ռիսկի կառավարման փուլերի առանձնահատկությունները ըստ առանձին վարկառուների և պորտֆելի ներկայացված են ստորև բերված

Աղյուսակում.

|                                  |       |  |   |
|----------------------------------|-------|--|---|
| Վարկային<br>կառավարման<br>փուլեր | ռիսկի | Վարկային ռիսկի կառավարման փուլերի առանձնահատկությունները ըստ                         |   |
|                                  |       | առանձին վարկառուի  | պորտֆելի  |
| Վարկային<br>բացահայտում          | ռիսկի | Ռիսկը արտահայտվում է հնարավոր պատճառներով փոխառուի պարտավորությունների չկատարման մեջ | Ռիսկը արտահայտվում է փոխառուների կողմից պարտավորությունների չկատարման հետևանքների մեջ |
| Վարկային                         | ռիսկի | Փոխառուի վարկունակության   | Վարկառուների դասակարգումը ըստ ռիսկի   |

|                        |   |  |
|------------------------|---|--|
| քանակական<br>գնահատում | զնահատում, որը բաժանվում է 2 փուլի.<br>Փոխառուի վարկային վարկանիշի որոշում<br>Հնարավոր կորուստների զնահատում  | դասերի հնարավոր կորուստների հաշվարկի համար.<br>1. Ըստ վարկային ոիսկի մակարդակի<br>2. Ըստ փոխկապակցվածության (նույն ճյուղի, նույն մարզի, բանկի հետ փոխկապակցված և այլ)<br>3. Հնարավոր կորուստների զնահատում |
| Որոշման ընդունում      | Հաշվի են առնվում վարկային ոիսկի քանակական գնահատականները  | Հաշվի են առնվում վարկային ոիսկի քանակական գնահատականները   |
